սի արքեպիսկոպոսին Նոցա ի մեծն Հռովմ, և անդրէն միւսանգամ յետս ոչ դառնալոյն, արժանի երևեցաւ մեզ կոչել զԹէոդորոսն Վարդանեանց Բագրատունեանց ի սուրբ աթոռոյս՝ որ ի տեղւոջ Իշման Բանին Աստուծոյ, ի Վաղարշապատ քաղաքին Հայոց մեծաց՝ հիմնեցաւ հաստատակառոյց ի վերայ հիման առաքելոց, երկրաւոր և երկնաւոր բանալեօք, կապել և արձակել յերկինս և ի յերկրի։ Զայր խոհեմ և իմաստուն, ազնուատոհմ ծննդեամբ, քրիստոնէական սննդեամբ և ամենայն առաքինութեամբ զարդարեալ, վարժեալ և տեղեկացեալ ի զանազան արհեստս գրոց և գիտութեանց և ի խորագոյն մակացութիւնս իմաստասիրական և աստուածաբանական հնարիւք և տեղեկութեամբք. Եւ զնա ձեռնադրել եպիսկոպոս Լեհաց երկրի՝ ըստ նախակարգութեան Աստուծոյ և օժանդակութեան ամենեցուն, ի կայսերանիստ քաղաքիս Կոստանդինուպօլսի, ի տօնի և տաճարի Վերափոխման մօրն լուսոյ Ս. Աստուածածնի։ Վասն որոյ ամենայն առհասարակ հաւատացելոց մեծաց և փոքունց՝ յայտ եղիցի. զի մեք առ ի վերուստ հրաւիրեալք ի հովուապետութիւն Հայոց ազգին, գլխափոխան և յաջորդ լինել սրբոց Առաքելոցն Թադէոսի և Բարդողիմէոսի, և երիցս երանելոյն Գրիգորի Լուսաւորչին, առաքելական և հայրապետական իշխանութեամբ երկնաւոր և երկրաւոր բանալեօք, սահմանեմք կարգեմք և հաստատեմք զԹէոդորոս Վարդանանցն՝ առաջնորդ հովիւ և տեսուչ Լեհաց երկրին, ի վերայ Հայոց ազգին. ամենեցուն ընդ հովուապետութեամբ և հոգաբարձութեամբ դորա՝ սիրով և հանդարտութեամբ հաստատ և անսասան մնալ, ամենեցուն հնազանդ լինել, և լսել ձայնի դորա. զոր դա ընդունի՝ և մեք ընդունիմք. և զոր դա մեկնէ և ի բաց մերժէ, և մեք մերժեմք և հաւանիմք. զոր օրհնէ՝ օրհնեալ եղիցի, և զոր դա կապէ և արձակէ երկրաւոր և երկնաւոր բանալեօք՝ կապեալ և արձակեալ եղիցի։ Ոչ ոք այսուհետեւ իշխեսցէ տիրել ի վերայ նոցա, ոչ խրատել և ուսուցանել, ոչ յանդիմանել կամ մխիթարել, բաց 'ի դմանէ, և կամ դորա հրամանաւ. ամենեքեան իբրև զմի 'ի մէջ նոցա ըստ կարգի և որպիսութեան եկեղեցական կանոնաց. Վարդապետն քարոզութեան պարապեսցի. այլ ոչ սնոտիապատուաստ ունայնութեամբ կամ մարդահաճութեամբ և ներհակ վարդապետութեամբ հարցն սրբոց. Երիցունք և քահանայք սրբազնագործութիւն կատարեսցեն. աբեղայքն և կրօնաւորք զմիայնակեցութիւն ընկալեալք՝ հաստատ և անսասան ճգնեսցին ի կրօնս իւրեանց, հնազանդութեամբ, յօժարութեամբ և աշխատութեամբ, և մանաւանդ ընթերցմամբ սրբոց գրոց և վարդապետութեամբ հարցն սրբոց։ Եւ ամենայն եկեղեցականքն և աշխարհականքն ըստ կարգին և որպիսութեանն շարժեսցին, սիրով և ամենայն հնազանդութեամբ առ հովիւ և տեսուչ իւրեանց։ Եւ եթէ ի պահպանութիւն պատուիրանացս այսոցիկ եկեղեցական կանոնաց անշարժ մնասցեն, կեցեալք ըստ հաճոյիցն Աստուծոյ, ընկալցին զվարձս 'ի Քրիստոսէ առատապէս և բիւրապատիկ. իսկ եթէ ուխտազանց և պատուիրանազանց եղիցին, պատժեսցին յառաջնորդէ իւրեանց հոգւով և մարմնով, աստ և 'ի